

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 29

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի
Խորհրդի 26.04.2011թ. նիստի

Խորհրդի 31 անդամներից ներկա էին 26-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Բակալավրիատում կիսամյակային քննությունների արդյունքների ամփոփում:
2. «ԵՊՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը թեկնածուների առաջադրում:
3. Ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Ա.Ա.Սահակյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու հարցը (փակ քվեարկություն):
4. Ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Ս.Յ.Դավալյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու հարցը (փակ քվեարկություն):
5. Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչի զեկուցումը վերջին երկու տարում ամբիոնի գործունեության մասին:
6. Թեկնածուական ատենախոսության թեմայի և մասնագիտական միմիսումի քննության հարցաշարի հաստատման հարցը:
7. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին – Բակալավրիատում կիսամյակային քննությունների արդյունքների ամփոփում:

Ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա.Թասլաքյանը ներկայացրեց քննաշրջանի արդյունքներն ըստ մասնագիտությունների: Նշվեց բակալավրիատի շրջանավարտների բավարար առաջադիմությունը և նշվեցին միջոցառումները ավարտական քննությունները կազմակերպելու գործում:

Խորհուրդը ի գիտություն ընդունեց Ա.Թասլաքյանի զեկույցը:

2. Լսեցին - «ԵՊՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը թեկնածուների առաջադրում:

Ներկայացվեցին մագիստրատուրայի ուսանողներ Անուշ Մարտիրոսյանի, Ալեքսանդր Բեկնազարյանի և Գեղամ Շախբազյանի թեկնածությունները:

Նշվեց, որ նրանք ՈԻԳԸ ակտիվ անդամներ են և ունեն հրատարակված գիտական աշխատանքներ:

Խորհուրդը բաց քվեարկությամբ

Որոշեց – Մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Անուշ Մարտիրոսյանին, մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողներ Ալեքսանդր Բեկնազարյանին և Գեղամ Շախբազյանին ներկայացնել «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության:

3. Լսեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան, ԶԶ ԳԱԱ թղթ. անդամ, ֆունկցիաների տեսության ամբիոնի պրոֆեսոր, ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Ա.Ա.Սահակյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

Գիտքարտուղարը ներկայացրեց ֆունկցիաների տեսության ամբիոնի կարծիքը՝ ամբիոնի միստի արձանագրությունից քաղվածքի տեսքով, ըստ որի Ա.Ա.Սահակյանը երաշխավորվում է պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:

Ներկայացվեց մրցութային հանձնաժողովի եզրակացությունը այն մասին, որ ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Ա.Ա.Սահակյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են պահանջվող պայմաններին և նա երաշխավորվում է պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:

Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց Ա.Ա.Սահակյանի թեկնածությունը դնել փակ (գաղտնի) քվեարկության: Հաստատվեց հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝ Ս.Սարգսյան (նախագահ), Վ.Սարաֆյան, Կ.Սաղաթելյան: Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց արդյունքները, ըստ որի՝ Ա.Ա.Սահակյանի թեկնածությանը կողմ են քվեարկել 26-ը, դեմ չկա, անվավեր քվեաթերթ չկա: Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Ա.Ա.Սահակյանը երաշխավորվում է պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:

Խորհուրդը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և

Որոշեց - երաշխավորել ֆունկցիաների տեսության ամբիոնի պրոֆեսոր, ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Արթուր Արտուշի Սահակյանին պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:

4. Լսեցին – Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտ, ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Ս.Յ.Դալալյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

Գիտքարտուղարը ներկայացրեց հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի կարծիքը՝ ամբիոնի նիստի արձանագրությունից քաղվածքի տեսքով, ըստ որի Ս.Յ.Դալալյանը երաշխավորվում է պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:

Ներկայացվեց մրցութային հանձնաժողովի եզրակացությունը այն մասին, որ ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Ս.Յ.Դալալյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են պահանջվող պայմաններին և նա երաշխավորվում է պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար: Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց Ս.Յ.Դալալյանի թեկնածությունը դնել փակ (զաղտնի) քվեարկության: Հաստատվեց հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝ Ս.Սարգսյան (նախագահ), Վ.Սարաֆյան, Կ.Սաղաթեյան: Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց արդյունքները, ըստ որի՝ Ս.Յ.Դալալյանի թեկնածությանը կողմ են քվեարկել 26-ը, դեմ չկա, անվավեր քվեաթերթ չկա: Փակ (զաղտնի) քվեարկության արդյունքով Ս.Յ.Դալալյանը երաշխավորվում է պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:

Խորհուրդը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և

Որոշեց - երաշխավորել հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտ, ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Սամվել Հրանտի Դալալյանին պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:

5. Լսեցին - Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչի զեկուցումը վերջին երկու տարում ամբիոնի գործունեության մասին:

Ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Յու. Մովսիսյանը: Նա նշեց, որ ամբիոնը բարձր մակարդակով գիտամանկավարժական գործունեություն է վարել: Տպագրվել են 40 - գիտական աշխատանքներ, 5 - ուսումնական ձեռնարկներ: Ամբիոնի դասախոսները ղեկավարում են 5 - ասպիրանտներ: Ամբիոնի աշխատակիցները մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների: Նշվեց, որ ամբիոնի 2 - դոցենտներ՝ Ս.Յ.Դալալյանը և Վ.Ս.Աթաբեկյանը պաշտպանել են դոկտորական ատենախոսություններ:

Որոշեցին – Ի գիտություն ընդունել հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչի զեկույցը և ամբիոնի կատարած աշխատանքները համարել բավարար:

6. Լսեցին – Թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Որոշեցին – Հաստատել Արամ Օնիկի Եսայանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Բազմակի օբյեկտների նկատմամբ վիճակագրական վարկածների ստուգում», Ա-01.05 մասնագիտությամբ:

7. Լսեցին – Թեկնածուական միմիմումի մասնագիտական քննության հարցաշարի հաստատման հարցը:

Հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության ամբիոնի կողմից ներկայացվեց հարցաշարը:

Որոշեցին – Հաստատել մասնագիտական միմիմումի քննության հարցաշարը:

8. Լսեցին - Մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր Վ.Ռ.Բարսեղյանի «Վարիացիոն հաշիվ» խնդիրների լուծման ձեռնարկը հրատարակման ներկայացնելու հարցը:

Ներկայացվեց ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումը, համաձայն որի խորհուրդը երաշխավորում է ուսումնական ձեռնարկը ներկայացնել հրատարակման:

Նշեցին ուսումնական ձեռնարկի կարևորությունը ուսումնական գործընթացում:

Որոշեցին - Վ.Ռ.Բարսեղյանի «Վարիացիոն հաշիվ» խնդիրների լուծման ուսումնական ձեռնարկը ներկայացնել հրատարակման:

9. Լսեցին - Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտներ Հ.Հ.Օհնիկյանի և Վ.Ա.Փիլիպոսյանի «Վերլուծական երկրաչափության խնդրագիրք» (1-ին և 2-րդ մասեր) ձեռնարկը հրատարակման ներկայացնելու հարցը:

Ներկայացվեց ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումը, համաձայն որի խորհուրդը երաշխավորում է ուսումնական ձեռնարկը ներկայացնել հրատարակման:

Նշեցին ուսումնական ձեռնարկի կարևորությունը ուսումնական գործընթացում:

Որոշեցին - Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դոցենտներ **Յ.Յ.Օհնիկյանի** և **Վ.Ա.Փիլիպոսյանի** «Վերլուծական երկրաչափության խնդրագիրք» (1-ին և 2-րդ մասեր) ուսումնական ձեռնարկը ներկայացնել հրատարակման:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան